



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի N°---Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N°374Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N°374Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

- 1) Կարգի 28-րդ կետում «անձը պարտավոր է» բառերից հետո լրացնել «Արտադրության լիցենզիայով ամրագրված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ),» բառերը.
- 2) Կարգի 28-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ինքնակամ կառույցների օրինականացման, անհրաժեշտության դեպքում՝ նաև տնօրինման մասին որոշումների» բառերը.
- 3) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-րդ և 29.1-րդ կետով.

«28.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում Արտադրության լիցենզիա ունեցող անձինք Նախագծի և 28-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի փոխարեն Հանձնաժողով են ներկայացնում հինքնակամ կառույցների օրինականացման, անհրաժեշտության դեպքում՝ նաև տնօրինման մասին որոշումների պատճենները:»:

«29.1. Արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Արտադրության լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև Արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

- 1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.
 - 2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ սույն կարգի №3 հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 3) Սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում Արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է:»:
- 4) Կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետում «նախագիծը» բառից առաջ լրացնել «կայանի վերակառուցման» բառերը:
- 5) Կարգի 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Լիցենզիայի գործողությունը կասեցվում է նաև հետևյալ դեպքերում.

- 1) Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա կասեցվելու դեպքում.
- 2) Արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից՝ Արտադրության լիցենզիայով ամրագրված՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը սույն կարգի 29.1 կետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվելուց

հետո սահմանված ժամկետում այն Հանձնաժողով չներկայացնելու դեպքում:».

6) Կարգի 47.1-րդ կետի 4-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ մարմնի» բառերը փոխարինել «դատարանի» բառով:

7) Կարգի №3 հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 29.1 կետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ